

## Ռ

ՌԱՓԱՅԷԼ ՎՐԴ. ԲԱՂԻՇԵՑԻ.— Մբ. Զո. 1814ին. ՏՓ. 1843ին. կը վախճանի 1847ին :

ՌԱՓԱՅԷԼ ՎՐԴ.— Մբ. Նւ. Ակնայ. կը վախճանի 1799ին :

ՌԱՓԱՅԷԼ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. 1866ին :

ՌԱՓԱՅԷԼ ՎՐԴ.— Մբ. ՏՌ. 1822ին :

ՌԸԶԳՈՒԼԼԱՆ ԽԱՆՃԵԱՆ, ՀԱԼԷՊՅԻ.— 1912ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, նոյն թուականին Հալէպի մէջ ունեցած իր երկու տուները կը կտակէ Ս. Յակոբի վանքին : Յիշեալը կը վարէ Հալէպի կալուածոց հոգաբարձութիւնը : (Արձնգր. Տն. Ժող. նիստ ԼԴ. էջ 110. Թ. 1912)

ՌՈՒՀԻԶԱՆ ՎԱՆԵՑԻ (ԽՕՃԱ).— Վէզիր Խոսրով փաշայի փորձնապաշին, Տիգրանակերտէն փոխադրուած Կ. Պոլիս : Ռուհիւճան ստացողն է 1608ին Վան ընդօրինակուած ձեւագիր Աւեստրանի մը՝ որուն յիշատակարանին մէջ մանրամասն նշանակուած են իր ծնողքին եւ բոլոր պարագաներուն անունները. յականէ յանուանէ (Լարս. Յուց. էջ 831) : Ռուհիջան Աստուածատուր եւ Եղիազար պատրիարքներու օրով վարած է Պոլսի փոխանորդութիւնը. և ուրիշ խօճաներու աջակցութեամբ յաջողած է Ս. Յակոբի իրաւանց մասին արքունական հրովարտակներ ձեռք բերել. խօճա Դաւիթին հետ ներկայացած է ա'յն Յանձնաժողովին՝ որ մեծ եպարքոսին հրամանով կազմուած էր Հայոց և Յունաց Ս. Տեղեաց մէջ ունեցած սահմանները ճշգրտու : 1648ին Ռուհիջանին Վանայ մէջ կատարած բարեգործութեանց տեղեկանալու համար տեսնել (Դարձիճեցի, էջ 245 և 493) :